

տեղի թափէի, որ ակն անգեղ եւ գռեհիկ զառամացեալ եւ դառնահոգի արեւորն ոչ միայն ըզփանայր ի տեսութիւն զուարթագունեղ գեղեցկութեանց մատաղատունկն տիոց, որպէս ազգաւք ընդ վարդենիս, այլ որպէս ընդ ոսկէփետուր սիրամարգացն անձանց ճօճական ճեմողաց սգացելոց աղուէսն բրտի ի միջի կացեալ՝ գտուտն տգեղ տարաբերեալ զովանայր: Եւ որ թալկանայն տարփամբ սրտին բորբոքելոյ անգամ տեսութեան միոյն ի նոցանէ՝ ի տարուստ նստեալ զանխուլ տաղնապէր հառաչանօք: Իսկ շողոտ եւ ժանկոտ խոֆածն զհասարակաց զանձինս նոցա համանգամայն տեսանէր, ըստ այնմ՝ թէ ահա՛ շէքէր՝ լի շիււան ի բերան. ահա՛ վարդերք նազելիք ի ձեռն խորեատ շնձերի. ահա՛ ջուր պատուական զովացուցիչ՝ ՚ւ օձն էր պահապան. ահա՛ ճէվհէր եւ կէվհէր մատենից՝ ՚ւ իժն ի դէմն նստեալ. ահա՛ ճոխածեմ կաքաւողացն պարք կաքաւուց՝ եւ ազուսն տգեղ ի միջի գգմդէր. ահա՛ ժողովք խաղուց պերճացելոց որթոց ի վերայ լերանց խնկաբուրմանց՝ եւ կինջն ցոտ գարշելի ի միջի տատանէր: Իսկ հիւսիսայինն վօռէաս նպաստ լինէր առ ի խաղս վաստակոց նոցուն զի մի կիզցէ իլիօսն երկնային զլամբրօնափայլ գեղ նոցա: Զի որք տոչորեալք էին տնարգեալք յուռուցումն տարփանաց՝ իւրաքանչիւրքն թափէին անդէն քրտամբք զմեղացս տարփականի սրտից՝ որպէս զդեղթափս բժշկաց առ ի զովացումն բորբոքեալ սրտից: Եւ օդն վօռէասական ոչ միայն ի տապոյ արփուոյն պահպանիւր զգեղ կերպարանաց փափկասուն նազելեաց, այլ եւ ի տեսիլս յաճախէր տեսողացդ վերոյ գրելոցդ, եւս առաւել դոփս գարշապարաց հասարակ միեղէն մաքրակերպից, զորոց զշղաշատեռն զգեստուց եւ զխոպուպիս գարդուցն իբրեւ գառագաստ նաւուց ուռուցմամբ յընդերականն հանդիսի սրատես վարեալ տեսանիւր: